



Լուսանկարը՝ Փերնան Ավագյանի

## «Հաշմանդամություն ունեցող մարդիկ» թե՞ «հաշմանդամներ»

Ես հաշմանդամության ոլորտի մասնագետ չեմ: Սակայն քույր ունեմ, որը հաշմանդամություն ունի: Նա չի լսում, խուլ է: Թեև լսել չի կարող, սակայն կարող է անել շատ այլ բաներ: Այսպիսով ես հարցնում եմ ձեզ. «Արդյո՞ք նա հաշմանդամություն ունեցող կին է, թե՞ հաշմանդամ՝ անկարող կին»:

Լսողության բացակայությունը հաշմանդամության մի տեսակ է: Կան նաև բազաթիվ այլ տեսակներ: Եկեք մտածենք այդ խնդրի մասին մեկ այլ տեսանկյունից: Մեզանից շատերը ապրել են պահեր, երբ առօրյա կյանքում անկարող ենք լինում կատարել այս կամ այն գործողությունը: Այդ ժամանակ, լինի դա երկարատև թե կարճատև ժամանակամիջոց, մենք հաշմանդամ ենք: կին»:

Հանգզված եմ, որ մենք բոլորս՝ մոլորակի տարբեր անկյուններում բնակվող մարդիկ, ապրել ենք անկարողության՝ հաշմանդամության պահեր: Բայց արդյո՞ք մենք երբևէ մտածել ենք, որ այդ անկարողության պատճառով կյանքը պետք է ավարտվի: Մենք միշտ փորձում ենք հաղթահարել դժվարությունները և թույլ չենք տալիս մեզ «հանձնվել»: Մենք պայքարում ենք՝ ջանալով ապրել, տեղի չտալով մեր անկարողություններին: Մեր ամենօրյա պայքարը անարդարության և խտրականության դեմ հզորացնում է մեր անհատականությունը, համբերությամբ լցնում մեր սրտերը, ինչը թույլ է տալիս հաղթահարել անհանդուրժողականությունը:

Հաշմանդամները և հաշմանդամության խնդիրները երկար տարիներ եղել են բազմաթիվ հետազո-

տությունների և բանավեճերի առարկա: Համաշխարհային Առողջապահության կազմակերպությունը անցյալ 30 տարիներին մշակում էր հաշմանդամների սահմանումները, ըստ որոնց հաշմանդամությունը անմիջապես կապված է առողջության խնդիրների հետ:

Ողջ աշխարհում հաշմանդամություն ունեցող մարդիկ պայքարում են իրենց քաղաքացիական իրավունքների համար: Եվ այդ նպատակին հասնելու միակ միջոցը օրենսդրորեն այդ իրավունքները պաշտպանելն է: Ներկայումս շատ երկրներում գոյություն ունեն օրենքներ, որոնք սահմանում են որոշ իրավական պաշտպանություն հաշմանդամների համար: Սակայն գրեթե բոլոր այդ օրենքներում հաշմանդամությունը նկարագրվում է որպես բժշկական խնդիր: Այլ կերպ ասած՝ օրենքը, փաստորեն, մերժում է հաշմանդամների իրավունքների պաշտպանությունը այն իրավիճակներում, որտեղ նրանք անկարող են որևէ բան անել:

Մենք պետք է փորձենք չառանձնացնել հաշմանդամություն ունեցող մարդկանց: Մեզանից յուրաքանչյուրն, անկախ այն բանից, հաշմանդամ է, թե՞ ոչ պետք է ունենա հնարավորություն՝

- տեղեկատվության և իրավունքների պաշտպանության
- կրթության և զբաղվածության
- օրենքի պաշտպանության
- ընտանեկան կյանքի

- կյանքի իրավունքի պաշտպանության

Ժամանակն է գիտակցելու, որ հաշմանդամությունը չի նշանակում անհատի անկարողություն՝ մասնակից լինելու կյանքի անցուղարձին: Ընդհակառակը, հաշմանդամությունը հետևանք է այն սոցիալական խոչընդոտների, որոնց հանդիպում են ֆունկցիոնալ խանգարումներ ունեցող մարդիկ:

Հասարակությունը ստեղծում է հաշմանդամության մասին թյուր ըմբռումներ, որոնք բացասաբար են ազդում հաշմանդամների կյանքի որակի վրա:

Իրավացի է Կոստա Ռիկայի նախագահ Օսկար Արիասը. «Մարդու կյանքում ամենագեղեցիկը բազմազանությունն է, որը երբեք չպետք է օգտագործվի անհավասարությունն արդարացնելու համար»:

Հաշմանդամություն ունենալը մեղք չէ: Չի կարելի մտածել, որ հաշմանդամությունը մի հիվանդություն է, որ անհրաժեշտ է «բուժել»: Հարկավոր է կենտրոնանալ այն բաների վրա, որոնք մենք կարող ենք անել, այլ ոչ թե այն բաների վրա, որոնք ի վիճակի չենք անել:

Մարինա Ներսիսյան,  
Բոստոն, ԱՄՆ



# «Փարոսի» լույսը աշխարհի մայրաքաղաքում



...Դժվար էր հավատալ, որ այս անգամ երգելու ենք «աշխարհի մայրաքաղաք» Փարիզում: 29 երգ պիտի ներկայացնեինք Փարիզի նրբաճաշակ հանդիսատեսին, այն էլ ինչպիսի գործեր... Կոմիտասի, Բ.Կանաչյանի, Գ.Սյունու, Ա.Տեր-Ղևոնդյանի, Թ.Ալթունյանի, Ռ.Մելիքյանի, Մ.Եկմալյանի, Ա.Բաբաջանյանի, Ք.Կարա-Մուրզայի, Տ.Չուխաջյանի, Է.Հովհաննիսյանի և Ռ.Ամիրխանյանի ստեղծագործություններից, ինչպես նաև մի շարք ժողովրդական երգաստեղծության վառ նմուշներ: Չնոռանանք նաև արևմտաեվրոպական և ռուսական ստեղծագործությունները՝ Գունո «Լակրիմոզա», Սկառլատի «Օ, Չեստե», Սպիրիդուել «Լեթ մայ փիփլ գո», բուլղարական ժողովրդական երգ «Կակ վա մոնա»... Փոքրիկ անակնկալ էինք պատրաստել ֆրանսիացիներին՝ Գի Մադդելի «Վարդը» ֆրանսերեն լեզվով և Ջոն Լենոնի «Միշելը»: Բոլորիս հուզմունքը հասկանալի էր: Բացի այդ, մեզանից շատ-շատերը Փարիզում հայտնվելու էին առաջին անգամ, ուստի, երբ ինքնաթիռի շարժիչներն ահռելի շառաչյունով աշխատեցին, բոլորիս սրտերն սպասունից սկսեցին բրբռալ:

Եվ իզուր չէր: Փարիզի Շառլ դե Գոլ օդանավակայանում մեզ դիմավորեցին հայ համայնքի ներկայացուցիչները՝ Սոցիալական աջակցության հայ ասոցիացիայի նախագահ Ալեն Թուհանջյանի և նույն կազմակերպության վարչության անդամ Ռոզի Ալեքսյանի գլխավորությամբ, ովքեր ուղեկցեցին մեզ 4-աստղանի մի շքեղ հյուրանոց, որ գտնվում է Էյֆելյան Աշտարակի շրջակայքում, Սենա գետի ափին: Նշենք, որ այս հանգրվանը մեր գլխավոր հովանավոր Շտրաուս-Քուլհանջյան ընտանիքի շնորհիվ էինք ստացել:

Համերգի նախորդող օրերին հասցրեցինք փոքր-ինչ ծանոթանալ այդ հրաշալի քաղաքին: Այդ հարցում մեր լավ օգնականն էր պարոն Ժիրայրը՝ ֆրանսահայ պարող, որի կյանքի մեծ մասն անցել է Փարիզում: Վերջինս հաճախում էր ծանոթացնում էր մեզ տեսարժան վայրերին՝ համեմտելով պատմությունները պատմական հետաքրքիր մանրամասնություններով:

Գուստավ Էյֆելի մետաղյա գլուխգործոցը ստեղծվել է 1889 թվականին՝ ֆրանսիական հեղափոխության 100-ամյակի առթիվ: Օգտագործելով 7300 տոննա պողպատ՝ ինժեները հավաքել է 330 մետր բարձրություն ունեցող այս աշտարակը, որն այժմ կարելի է տեսնել Փարիզի ցանկացած կետից: Այդ առիթով մի պատմություն կա՝ իբր Գուստավ Էյֆելն աշտարակի գագաթում իր համար փոքրիկ մի խուց է կառուցել և ասել. «Սա միակ տեղն է, որտեղից այս տձև կառույցը չի երևում»:

Այժմյան Փարիզը բաղկացած է 20 համայնքներից և ունի շուրջ 2 մլն. բնակչություն, օրական ևս 5-6 մլն. մարդ էլ Փարիզ մտնում է զուտ աշխատելու համար: Փարիզեցիները հիմնականում բնակվում են արվարձաններում:

Սենա գետն ունի 33 կամուրջ, մեկը մյուսից գեղեցիկ, սակայն ամենագեղեցիկն ու փառավորը համարվում է կայսր Ալեքսանդր Երրորդի կամուրջը՝ զարդարված ոսկեգույն քանդակներով: Տռուկադերո հրապարակից անմիջապես հետո հայտնվում ենք այն պատմական վայրում, որտեղ ամեն տարի ապրիլի 24-ին հավաքվում են Փարիզի հայ բնակիչները

և միահամուռ շարքերով երթ կատարում դեպի Թուրքիայի դեսպանատուն, այնտեղից էլ դեպի ֆրանսիայի հերոս, մարշալ Շառլ դե Գոլի անվան հրապարակ, ուր ծաղկեփնջեր են դնում անհայտ հերոսի շիրիմին: Հայերի համար սրտամոտ վայրերի թվում է նաև Շանգ Էլիզե պողոտան, որի ընդհանուր երկարությունը 2 կիլոմետր է: Այն միացնում է Հաղթական Կոնկորդի հրապարակին: Շանգ Էլիզեի ամբողջ երկայնքով լույսեր են վառվում, նույնիսկ գիշերը Հաղթական Կոնկորդի տակ կանգնած՝ կարելի է տեսնել հեռվում վեր խոյացող Կոնկորդի («Համաձայնության») արձանը: Այս հրապարակն ունի ճակատագրական յուրատեսակ խաչմերուկի



համբավ: Նրա կենտրոնում գտնվում է այն օբեկտիվը՝ եգիպտական բուրգի մի կտորը, որը ժամանակին եգիպտոսի կայսրը ուղարկել էր Ալեքսանդր Երրորդին՝ որպես երկրների միջև համաձայնության խորհրդանիշ: Այս արձանն էլ շրջապատված է շքեղ, լյուդովիկյան ոճին և ժամանակաշրջանին պատկանող շատրվաններով (ժամանակին այս հրապարակը կոչվել է Palace de la Fontaine), որտեղ ֆրանսիական հեղափոխությունից հետո, արյունաբեր 1789 թվականին, գլխատվեցին Լյուդովիկոս XIV թագավորն ու թագուհի Մարիա Անտուանետան: Նույն ճակատագրի քմահաճույքով գուցե, շատրվանների դիմաց գտնվում է այժմյան Ֆրանսիայի Ազգային ժողովի շենքը՝ կառուցված ողջ ֆրանսիական ճարտարապետությանը բնորոշ հալո-հռոմեական ոճով:

Քիչ առաջ անցնելով կարելի է տեսնել առաջին երկաթուղային կայարանը՝ Փարիզ - Օրլեան երթուղիով: Այժմ այս հիմնավոր շենքում պատմական թանգարան է: Սենայի մյուս ափին սկսվում է աշխարհահռչակ Լուվրի շենքերի շարքը, որոնք Լյուդովիկոս XIV-ը սկսել է կառուցել 1650-ական թվականներին: Այդ շենքերի բակում աչք է ծակում Ֆրանսիայի նախկին նախագահ Ֆրանսուա Միտերանի կառուցած ապակե բուրգը, որը ճարտարապետական տեսանկյունից բոլորովին չի ընկալվում հալո-հռոմեական ոճի շենքերի ֆոնի վրա: Եվս մեկ պատմական պարադոքս՝ Լուվրի շքամուտքի (և Միտերանի բուրգի) դեմ-դիմաց գտնվում է Նապոլեոն Բոնապարտի կառուցած Բրանդենբուրգյան կամարը: Թույլ տանք մեզ եզրակացություն անել՝ Ֆրանսիայի յուրաքանչյուր ղեկավար իր պարտքն է համարում Լուվրում թողնել իր մասին որևէ ճարտարապետական «հիշեցում»:

Լուվրի բակից անմիջապես դուրս ենք գալիս Բիվոլի պողոտա, այստեղ Լուվրի դրսի պատերին կերտված են Նապոլեոն Բոնապարտի բոլոր փառավոր զինակիցների և հրամանատարների ամբողջական քանդակները՝ Մյուռատ, Դյուռոկ և այլք...

Բիվոլի փողոցով Կոնկորդի հրապարակ վերադառնալիս, անցնում ենք հայտնի Տյուիլրի պարտեզի մոտով: Այստեղ է գտնվում Իմպերսիոնիստների թանգարանը: Շրջան կատարելիս, ուղևորվում ենք դեպի Վիկտոր Յուլիոյի գլուխգործոցի ներշնչանքի աղբյուրը՝ Փարիզի Աստվածամոր Տաճարը: Ճանապարհին սիրահարների կամուրջն անցնելիս, տեսնում ենք Նապոլեոն Բոնապարտի հիմնած Արևելյան լեզուների ակադեմիան, որի շենքն ունի յուրահատուկ գմբեթաձև կամար: Պարոն Ժիրայրի վկայությամբ՝ հայոց լեզուն այստեղ համարվում է պարտադիր ուսու-



ցանվող լեզուներից 5-րդը: Այս կապակցությամբ (իբրև ապացույց) մեր էքսկուրսավարը պատմեց մի անեկդոտ. «Երբ հռչակավոր Վատերլոո ճակատամարտից առաջ Բոնապարտը շրջում էր իր հավատարիմ զինվորների շարքերով և քաջալերում նրանց, հանկարծ շարքերից մեկում լսեց հայերեն խոսակցություն: Անմիջապես ներս մտավ և ասաց. «Տղաք, դո՞ւք ալ հայիք»...

Հենրիխ IV կայսրի անվան կամրջից հետո երևում է մի մռայլ, հիմնավոր, վաղ-միջնադարյան կառույց հիշեցնող շենք՝ միմյանց զուգահեռ երկու սուր կատարներ ունեցող աշտարակներով: Սա Concierjerie-ն է՝ այն վայրը, ուր պահում էին Լյուդովիկոս XIV-ին և Մարիա Անտուանետային մինչ Palace de la Fontaine տանելը:

Վերջապես, Notre Dame de Paris՝ Փարիզի Աստվածամոր տաճարը: Մենք, թեև շտապում էինք, իջանք և նկարահանեցինք այս հրաշագեղ և բարձրարվեստ տաճարը: Շքամուտքը ներկայանում էր երեք հսկա կամարներով՝ զարդարված Աստվածաշնչյան հերոսների նրբակերտ քանդակներով, իսկ ներսում... Ներս մտնելիս սկսում ես հասկանալ, որ կամա թե ակամա ներխուժել ես հսկա, ինքնուրույն և բազմաշերտ մի աշխարհ, ուր յուրաքանչյուր պատի կամ առաստաղի չնչին հատվածն անգամ ներտաճարային գեղարվեստական զարդարման արվեստի բացառիկ նմուշ է հանդիսանում, այն էլ՝ սրբազանության զգացումով ընկալվող: Ապարդյուն էին չնաշխարհիկ խճանկարները լուսանկարելու մեր փորձերը՝ խորհրդավոր կիսախավարը, որ լուսավորվում էր միմիայն այցելուների վառած մոմերից, թույլ չէր տալիս ճշգրիտ պատկեր ստանալ: Լիովին հասկանում ես հանճարեղ Յուլիոյի ընտրությունը՝ գլուխգործոց ստեղծելու համար բավական էր այս հրաշալիքն ընտրել որպես ստեղծագործության հիմք:

Փարիզի Աստվածամոր տաճարից հետո մնում էր միայն հիացած վերադառնալ հյուրանոց՝ կարծես այլևս ոչ մի վայր տեսարժան համարվել չէր կարող...


Ահա եկավ մեր ուղևորության հիմնական նպատակի օրը: Մեր անփոփոխ և հավատարիմ փարիզյան ուղեկից մայր Քրիստինան սալյակների համար նախատեսված հատուկ ավտոբուսով մեզ տարավ Փարիզի 9-րդ համայնքի թաղապետարանի համերգասրահ, որը հպարտորեն կրում է Ջոակինո Ռոսինիի անունը: Սրահը շատ լավ ակուստիկա ունի. նույնիսկ ամենավերջին նստարաններին տեղավորված ունկնդիրները պարզորեն լսում էին կլորավուն և թատերականորեն լուսավորված բեմից եկող բոլոր հնչյունները:

Բոլորս հուզվում էինք՝ 29 երգ Փարիզի հանդիսատեսի համար կատարելը կատակ չէ: Բայց երբ կուլիսների հետևից թաքուն մայեցիք լեցուն դահլիճին, որ սպասում էր մեզ, երաժշտությունը, կարծես, ինքնաբերաբար սկսեց դուրս հոսել մեր սրտերից...

Նույնիսկ չնկատեցինք, թե ինչպես «մի շնչով» ավարտեցինք մեր համերգի 2 բաժինները: Ուշքի եկանք միայն այն ժամանակ, երբ գիտակցեցինք, որ դահլիճը հոտնկայս ծափահարում է և բղավում. «Բրավո, «Փարոս», բրավո»: Աստիճանաբար, մայելով մարդկանց հուզված դեմքերին, նկատում էինք ինչ-որ հարազատ դեմքեր՝ մեր փարիզյան հայրենակիցներն էին մեզ ողջունում և շնորհակալություն հայտնում, որ մեզ հետ մեր երգերով հայրենիքից մի բեկոր ենք բերել...

Լուսինե Մելքունյան  
Երևան-Բորդո-Փարիզ-Երևան





# Պարզապես նստած կին



19-ամյա ֆրանսուզի Դելֆին Սանսյեն ֆոտոմոդել է, որը 2 տարի է, ինչ զբաղվում է իր սիրելի գործով՝ շրջագայում է Եվրոպայում՝ հանդիսատեսին ցուցադրելով իր գրավիչ մարմինը, նուրբ ու հուզական դեմքը, բաց-երկնագույն՝ կարծես մանկական աչքերը՝ եզերված երկար թավշյա թարթիչներով:

Լուսանկարները դիտելիս դժվար է պատկերացնել, որ այս գեղեցիկ կինն ի ծնե հաշմանդամ է և մարմնի բոլոր անդամներից զգում է միայն բերանը, աչքերը, ականջներն ու քիթը:

Մեր հերոսուհին ծնվել է Կանադայի Մոնրեալ քաղաքում, հաշմապահի և բուժաշխատողի ընտանիքում: Մինչև 3 տարեկան փոքրիկ Դելֆինը գտնվել է ծնողների խնամքի տակ, սակայն, երբ վերջնականապես պարզվեց, որ աղջիկը տարածության մեջ պիտի տեղաշարժվի միայն հատուկ հարմարեցված սայլակի միջոցով, նրան տեղափոխեցին Ֆրանսիա (այն ժամանակ Կանադայում այդպիսի հնարավորություններ չկային): Ֆրանսիայում մասնագետները բազում հետազոտություններից հետո ստեղծեցին Դելֆինի համար կենսագործունեության պատշաճ պայմաններ: Այժմ նա ունի հատուկ խնամարկու մի կին, ով զբաղվում է նրա մարմնով. «Նա իմ մարմնի բաղկացուցիչ մասն է»,- խոստովանում է Դելֆինը:

Անշուշտ հարց է ծագում, թե ինչպես մեր հերոսուհին դարձավ ֆոտոմոդել: «Տարիներ շարունակ իմ մարմինը հանդիսանում էր անվերջ հետազոտությունների, ռենտգեն-լուսանկարահանումների առարկա, բոլորն իմ մեջ միայն հիվանդ օրգանիզմ էին տեսնում: Ինձ համար հետաքրքիր էր հասկանալ, թե ինչպիսին է իմ մարմինն իրականում: Առաջին լուսանկարներս այդպես ծնվեցին: Բացի այդ, երբ ես պատկերացնում էի իմ հետագա կյանքը այդպիսի կարգավիճակում, սեփական գործունեություն ծավալելու անհաղթահարելի ցանկություն զգացի: Ես ուզում եմ ցույց տալ մարդկանց, որ իմ մարմինն ունի ցանկացած կնոջ մարմնին հատուկ բոլոր առանձնահատկությունները: Ես ունեմ երիտասարդ, գեղեցիկ մարմին, պարզապես ես այն չեմ զգում», - ամոթխած ժպտով խոստովանում է նա: Թե ինչ ասելիք ունի իր լուսանկարների այս ցուցահանդեսը, Դելֆինն ասում է.

«Մենք բոլորս տարբեր ենք, ունենք մեր առանձնահատկությունները: Այո, իմ վիճակը հիվանդությունն է, այլ առանձնահատկություն: Առանձնահատկությունը ցանկացած կնոջ համար այն ելակետն է, որտեղից պետք է սկսել կառուցել կյանքը՝ կյանք, որը նույնպես առանձնահատուկ է յուրաքանչյուրիս համար»:

Ավելացնենք նաև, որ գեղեցիկ և հմայիչ Դելֆինից անբաժան է հավատարիմ և հոգատար ընկերը՝ Օլիվյե անունով բարեստ երիտասարդը, ով նրան օգնում է տեղաշարժվել, ուտել, ծխել, ֆոտոնկարահանումների ժամանակ ընդունել անհրաժեշտ դիրքեր: Այս ժպտերես տղամարդը ցուցահանդեսի ամբողջ ընթացքում աշխույժ գրուցում էր թղթակիցների և հյուրերի հետ՝ մեծ ակնածանքով ներկայացնելով իր ընկերուհուն. «Նա հաշմանդամ չէ, պարզապես՝ նստած կին...»:

L.U.

## Լեզու և ստերեոտիպեր

Հաշմանդամների իրավունքների միջազգային շարժումը ճիշտ է համարում հաշմանդամության հետևյալ ձևակերպումը. «Հաշմանդամությունը հասարակության մեջ գոյություն ունեցող պայմանների հետևանք հանդիսացող՝ ֆիզիկական, մտավոր, զգայական և հոգեբանական շեղումներով մարդու գործունեության արգելքները կամ սահմանափակումներն են, որոնք զրկում են նման մարդկանց ակտիվ կյանք վարելու հնարավորությունից»: Հետևաբար հաշմանդամությունը սոցիալական անհավասարության վառ օրինակ է: Այն ոչ թե բժշկական, այլ սոցիալական հասկացություն է: Հաշմանդամության սոցիալական մոդելի ենթատեքստում տրամաբանական է օգտագործել համապատասխան տերմինաբանություն, որը չի ստեղծում բացասական ստերեոտիպեր և չի վիրավորում հաշմանդամ մարդու արժանապատվությունը:


Ինչպես ռասայական և ազգային նկարագիր տալու դեպքում, այնպես էլ հաշմանդամ մարդու համար որևէ տերմինի ընտրությունը հաճախ հիմնվում է ստերեոտիպերի, «հանդուրժողական» վերաբերմունքի և այլ զգայական ընկալումների վրա: Շատ հաշմանդամ մարդիկ, ինչպես նաև նրանց ներկայացնող կազմակերպություններ, դեմ են այնպիսի տերմինների օգտագործմանը, ինչպես, օրինակ, «կաղ», «զամված», «զոհ» և այլն:

Հատկապես կարևոր է ճիշտ տերմինների օգտագործումը լրագրողների կողմից: Երբեք մի հիշատակեք մարդուն բացառապես ըստ նրա հաշմանդամության՝ կաղ, արատավոր, խուլ-համր, կույր, մտավոր հետամնաց, թերհաս, հոգեկան հիվանդ, հիմար, անվասայլակին գամված, առողջ կամ նորմալ (ի տարբերություն հաշմանդամի):

Ճիշտ տերմինաբանության սկզբունքն է՝ «Սկզբում մարդը»:

### Երբ խոսում կամ գրում եք հաշմանդամների մասին

Օգտագործեք բառեր և հասկացություններ, որոնք չեն ստեղծում ստերեոտիպեր	Խուսափեք ստերեոտիպեր ստեղծող բառերից և հասկացություններից
Հաշմանդամ, հաշմանդամություն ունեցող մարդ, ֆունկցիոնալ խանգարում ունեցող մարդ, սահմանափակ ֆունկցիաներ ունեցող մարդ	Հիվանդ, կաղ, արատավոր, անլիարժեք, դեֆորմացված
Ոչ հաշմանդամ, սովորական, տիպային մարդ, կարող է քայլել, տեսնել, լսել և այլն (ի տարբերություն հաշմանդամի, կույր, վատ լսող մարդու)	Նորմալ, առողջ (ի տարբերություն հաշմանդամի)
Անվասայլակից օգտվող մարդ, անվասայլակավոր, ողնուղեղի վնասվածք ունեցող մարդ, սպինալ հաշմանդամ	Անվասայլակին գամված
Ի ծնե հաշմանդամություն, մանկուց հաշմանդամ	Ի ծնե արատ, դժբախտություն
Մանկական ցնցակաթված (կամ նման այլ բան) ունի	Տառապում է մանկական ցնցակաթվածով
Տարել է պոլիոմիելիթ, պոլիոմիելիթի հետևանքով հաշմանդամություն ունի, հիվանդություն տարած մարդ, հաշմանդամ է դարձել ինչ-որ բանի արդյունքում	Տառապում է պոլիոմիելիթով, պոլիոմիելիթի հետևանքներից, պոլիոմիելիթի գոհ
Մտավոր հետամնաց մարդ (միայն չափահաս մարդկանց համար)	Թերհաս, մտավոր թերի
Ջարգացման հապաղում ունեցող երեխա, դանդաղ ընկալող երեխա, մտավոր հատուկ կախքներ ունեցող մարդ	«Արգելակված», թերամիտ, դեբիլ, իմբեցիլ
Դաունի համախտանիշով մարդ (երեխա)	«Դաուն», «մոդոլոլիդ», «դաունիկ»
Էպիլեպսիա ունեցող մարդ, ցնցումներին ենթակա մարդ	Էպիլեպտիկ, ցնցումավոր
Հոգեկան հիվանդ մարդ, հոգեկան խնդիրներ ունեցող մարդ, հոգեկան խանգարում ունեցող մարդ	Գիժ, հոգեկան
Չտեսնող, վատ տեսնող կամ կույր մարդ	Կույր, լրիվ կույր
Լսողության խանգարում ունեցող մարդ, թույլ (վատ) լսող մարդ, լսողության թերություն ունեցող մարդ (երեխա), խուլ մարդ	Խուլ-համր, խուլ
Շփման դժվարություններ ունեցող մարդ, մարդ, որը չի կարող խոսել, համր մարդ	Համր





# «Օվասիս»՝ սիրո մթնոլորտ



Լուսանկարները Գերման Ավագյանի

1996 թվականին Հայաստանում ստեղծվեց «Կամք և Կորով» հասարակական կազմակերպությունը, որ նպատակ ուներ նպաստել լսողության խանգարումներ ունեցող երիտասարդների կրթական մակարդակի բարձրացմանը, մասնագիտության ձեռքբերմանն ու աշխատանքային զբաղվածության ապահովմանը: Կազմակերպությունն իր առջև խնդիր ուներ նաև ստեղծել պայմաններ լսողության խանգարումներ ունեցող երիտասարդների հոգեբանական խնդիրների հաղթահարման, նրանց հոգևոր և մշակութային զարգացման համար: Եվ 1998 թվականին այս ծրագրերի շրջանակներում կազմակերպությունը հիմնեց խուլերի մնջախաղի «Օվասիս» թատրոն-ստուդիան: Մեր իրականության մեջ սա նախադեպը չունեցող երևույթ էր: Եվ հիմնադիրները շատ ճիշտ էին կատարել ընտրությունը՝ թատրոնը միանգամից բազմաթիվ խնդիրներ կարող էր լուծել և հոգեբանական խնդիրների հաղթահարման ու լսողության խանգարում ունեցող այդ երիտասարդների հասարակության ինտեգրման խնդրում, և լավագույնս կարող էր նպաստել նրանց կուլտուրկենցաղային և հոգևոր-մշակութային զարգացմանը: 1998 թվականից ի վեր «Օվասիս» մնջախաղի թատրոնը լսողության խնդիրներ ունեցող բազմաթիվ երիտասարդներ է ընդունել ու ճանապարհել: Նրանցից շատերն են այստեղ ազատվել տարիներ շարունակ մաշող այն բարդությից, թե իրենք հասարակության լիարժեք անդամ չեն: Թատրոնի ներսում տիրող ջերմ մթնոլորտում նրանցից շատերը նաև գտել են իրենց անձնական երջանկությունը՝ սիրահարվել են, ամուսնացել, հիմա զավակներ ունեն: Երիտասարդները թատրոնը թողել են հիմնականում կենցաղային խնդիրներից ելնելով:

«Սկզբում երբ ես հանձն առա աշխատել այս թատրոնում, ինձ համար շատ դժվար էր,- պատմում է թատրոնի ռեժիսոր Ռոբերտ Ծատուրյանը,- ես չէի տիրապետում նրանց ժեստերի լեզվին, չվիճում էի թարգմանչի միջոցով»: Երիտասարդները սկզբում նաև հոգեբանական շատ լուրջ խնդիրներ են ունեցել: «Նրանք խոսացող մարդկանց չէին վստահում,- հիշում է Ռ.Ծատուրյանը, ում առաջին խնդիրը եղել է այդ բարդությի հաղթահարումը,- սակայն ինձ հաջողվեց վաստակել նրանց վստահությունը, քանի որ ես նրանց չէի վերաբերվում, որպես անլիարժեքություն ունեցող մարդկանց, չէի խղճում, նրանց համար ավելորդ կոմֆորտ չէի ստեղծում, այլ հակառակը՝ ստիպում էի, որ պարապեն, աշխատեն»: Երիտասարդներից շատերի համար է դժվար եղել հաշտվել այն մտքի հետ, որ համապատասխան բեմական հագուստ պետք է կրեն, տրիկոներով բեմ դուրս գալը նրանց բոլորովին անհասկանալի էր: Իսկ Արթուր Դաշյանն ասում է. «Ես նախկինում ընդհանրապես զաղափար չունեի, թե մնջախաղն ինչ է, ոչ մի անգամ չէի տեսել»: Ի դեպ Արթուրը ևս իր կնոջ՝ Մարիաննայի հետ ծանոթացել է «Օվասիսում»: «Աշուն» մանրամասնումը ծակատագրական է լինում նրանց համար: Այնտեղ մի դրվագ կա, ուր սիրահարված զույգը պետք է գրկախառնվի, իսկ սիրահար զույգի դերերում հանդես էին գալիս Արթուրն ու Մարիաննան: Բեմադրության առաջին փորձից նրանք արդեն զգում են, որ իրենց հետագա կյանքը միասին են ապրելու: Նրանք հիմա երկուսուկես տարեկան խոսող տղա ունեն, իսկ

Մարիաննան այլևս չի խաղում: «Բա երեխային ո՞վ խնամի»,- ժեստերի լեզվով ասում է փայլող աչքերով Արթուրը: Շատ կարճ ժամանակում բոլոր երիտասարդներն էլ սիրում ու կապվում են թատրոնին: Թատրոն-ստուդիան այսօր 8 դերասան ունի, որոնք ունեն պրոֆեսիոնալ մակարդակի դերասանական հմտություն և փորձ. այդ մասին նրանք բազմիցս հավաստել են ամենատարբեր փառատոներում ունեցած իրենց հաջողություններով:

1998-ից սկսած թատրոնը պարբերաբար հանդես է եկել Երևանում և մարզերում: 2001 թվականին նրանք հյուրախաղերով եղան Վրաստանում և շահեցին հանդիսատեսի համակրանքը: Այնուհետև հրավիրվեցին Տյումեն: Երևանում տեղի ունեցած մնջախաղի «Նազենիկ» փառատոնին մասնակցած լավագույն Տյումենի մնջախաղի թատրոնը նկատել էր երիտասարդների ուշագրավ խաղն ու հանդես եկել հյուրախաղերի առաջարկով: Տյումենում նրանք ևս շահեցին միայն սեր ու համակրանք: Թատրոնի դերասանուհիներից Աննա Բերբերյանը իր կյանքը չի պատկերացնում առանց «Օվասիսի»: Աննան, սակայն, լսողության խնդիր չունի: «Լսողության խնդիր ունեն ծնողներս, ես անգամ ամաչում էի նրանց հետ փողոց դուրս գալ, իսկ այսօր ես հպարտանում եմ նրանցով, այստեղ ես կարողացա հասկանալ, որ սարսափելի ոչինչ չկա, և այնքան ուրախ եմ, որ կամաց-կամաց նրանց և հասարակության միջև պատնեշը հաղթահարվում է», - ասում է Աննան:

Թատրոնի խաղացանկն այսօր բազմազան է: «Սկզբում ես որոշեցի բեմադրել մեր դասական մնջախաղի թատրոնից որոշ մանրամասնումներ, որոնք արդեն սիրվել էին հանդիսատեսի կողմից», - պատմում է ռեժիսորը: Հետագայում փորձ բերելուն զուգընթաց թարմացրել են խաղացանկը սեփական մտադրություններով: Արդեն ինը ամիս սովորում են բարձր ունակությամբ քայլել, սա ևս կօգնի բազմազանություն մտցնել խաղացանկում: Աշխատում են շեշտը հումորային մանրամասնումների վրա դնել, հումորով փորձում են թեթևացնել ոչ միայն իրենց, այլև մեր ոչ այնքան թեթև կյանքը: Եվ ամեն անգամ հանդիսատեսի զարմանքն ու հիացմունքը ավելի է մեծանում, երբ ներկայացման վերջում բեմ դուրս գալով նրանք իրենց շնորհակալությունը հայտնում են ոչ թե բառերով, այլ իրենց ժեստերի լեզվով:

Թեև բեմ չունենալու պատճառով «Օվասիս» այսօր հազվադեպ է ելույթներ ունենում, սակայն դա չի խանգարում, որ նրանք անընդհատ աշխատեն ու կատարելագործվեն: Ամեն անգամ նորովի մեզ ներկայանալու նրանց ցանկությունը մեծ է:

Նարինե Ավետյան

**Կոնտակտ տեղեկություններ.**  
**«Ունիսոն»** հասարակական կազմակերպություն  
 Հասցե՝ Երևան, Դեմիրճյան 36  
 Հեռ.՝ 52-21-70  
 Ֆաքս՝ 22-64-70  
 Վեբ-կայք՝ [www.unison.am](http://www.unison.am)  
 Էլ. փոստ՝ [unison@unison.am](mailto:unison@unison.am)

Այս համարը պատրաստել են Արմեն Ալավերդյանը, Գերման Ավագյանը, Լուսինե Մելքունյանը, Նարինե Ավետյանը

This project was funded through a Department of State Public Affairs Section grant, and the opinions, findings and conclusions or recommendations expressed herein are those of the Author(s) and do not necessarily reflect those of the Department of State

Սույն նախագիծը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետության գործերի և Կոմերսի հարաբերությունների բաժնի տրամադրված դրամաշնորհի շրջանակներում: Այս հրապարակման մեջ արտահայտված կարծիքները, եզրակացությունները կամ հանձնարարականները հեղինակային են և անպայման չէ, որ արտացոլեն ԱՄՆ Պետության գործերի և Կոմերսի տեսակետները